Գիրքը յուսապատճենահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԿՈՒԶԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԿԵՐԱԿՈՒՐՆ ՈՒՆԵԼԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒՆ
ԼՈՒՄԱՑԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՆ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ԵԼՈՒՅԱԿԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ
ՁԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆԻՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

Մուսա Լեռնեան

Վեպ հերոսի

ՍՐՍԱՆՔ ՀՈԳԵՇԵՆՔ

1134

ԳԱՌՆՈՒՄ ՀԵՂԵՐԻԿ ՍՈՒՐԱՆՅԱՆ

ԱԿԱՆՋՆ

ԳՐԱԿԱՆ
ՀՈԳԵՎՈՐ
ԵՐԳԱՐԱՆԱԿԱՆ

ԳՄԴ 84Հ7
Հ 847

Բտ 84Հ
Հ 847

Հովենց Մ.
Հ 847 Հայկ Նահապետ: Դրամա չորս արարվածով: Դպր. բարձր տարիքի համար. նկ. Հ. Մամյան, Եր.: Սովետ. գրող, 1985 — 96

Հեղինակն այս չափածո դրամայում, պատմական շատ սուղ փաստերի վրա գեղարվեստորեն պատկերել է օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի պայքարի իրադարձությունները

Հ 4803010200 (57)
705(01) 85 85 «Տ»

ԳՄԴ 84Հ7

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1985

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՀԱՅԿ — Հայոց Նահապետ
ՀԱՄՐԱՄ — Հայկի կինը
ԱՐՓԱԿՆ — Հայկի դուստրը
ԱՐԱՄԱՆՅԱԿ, **ԽՈՌ**, **ՄԱՆԱՎԱԶ** — Հայկի ուստրերը
ԻՍԿԱՆԻ — Հայկի զինակիցը
ՏԱՐԲԱՆ — Արևի տաճարի մեհենապետը
ԱՌՆԱԿ — Զորական, հետո Հայկի զինակիրը
ԲԵԼ — Բաբելոնի արքա
ՆԻՆ — **ԽՈՒՐՍԱԳ** — Բելի մայրը
ԱԲՈՒԱԼ, **ՊԱՅԱՍՊԻ** —Բելի ուստրերը
ԲԵՐՈՍՈՍ — Անուի տաճարի քրմապետը
ԻՍԻՆԻ — Բելի եղբայրը, զորապետ
ՄՈՆԹԱՆՈՒ — Բաբելական դեսպան
ԲԱԲԱՊ — Բելի արքունապետը
ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԶՈՐԱԿԱՆ — Բելի կողմից

ԴԱՅԱԿ — Արփակնի
ԱՎԱԳ ՋԻՆԱՎԱՐՊԵՏ — Հայկի կողմից
ՄԱՆԳՈՒ — Ցեղապետ Սլուն ցեղի
ՕՏԱՐԱԿԱՆ — Սլուն ցեղից
ՍՈՒՐՀԱՆԴԱԿ — Կադմոսի կողմից
ԳՈՒԺԿԱՆ
ԲԱՆԲԵՐ } —Հայկի կողմից
Ա. ԳՈՒՍԱՆ
Բ. ԳՈՒՍԱՆ } — Հայ գուսաններ
Գ. ԳՈՒՍԱՆ

Ա. ՇԻՆԱԿԱՆ
Բ. ՇԻՆԱԿԱՆ } — Հայ շինականներ
Գ. ՇԻՆԱԿԱՆ

Հայ և բաբելական զորականներ, սպասավորներ և ժողովուրդ:

(Գործողությունը կատարվում է մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կեսերին):



ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Հարթակ տանող բարձրադիր աստիճաններ: Վեց որմնամույթերի վրա բարձրանում է կապտավուն որձաքարից կերտված արևի տաճարը: Թաղակապ տանիքին դեռ նստած է լուսադեմի թեթև մշուշը: Պարիսպի դռնից ներս է մտնում ճերմակազգեստ մի աղջիկ: Նրա ետևից մտնում է մի կին: Աղջիկը մոտենում է տաճարի առջև դրված զոհասեղանին:

ԱՐՓԱԿՆ

Սիրելի մամի,
Սոսու պուրակում՝ ջրի մոտ եղիր,
Ես ինքս կգամ:

ԴԱՅԱԿ

Մենակ թողնեմ քեզ:



ԱՐՓԱԿՆ

Սրբոց տաճարից, դու հո լավ գիտես,
Չարը վանվում է հազար հրասախ[1]:

ԴԱՅԱԿ

Դողում եմ նույնիսկ մի մազիդ համար,
Ուր մնաց կյանքիդ:

ԱՐՓԱԿՆ

Սարսափի ոգուն վախկոտն է գերի,
Որ իր թույլ անձին լինի զորավիգ:

ԴԱՅԱԿ

Նման պահերին
Իրավունք չունեմ
Թեկուզ և մի քայլ հեռանալ քեզնից:

ԱՐՓԱԿՆ

Ամեն մեկն հոգում գաղտնիք ունի մի,
Որ իր անձին է պատկանում միայն.
Զուր մի՛ հապաղիր:



ԴԱՅԱԿ

Կամքիդ պահապան
Բագինը[2] լինի ...

(Դայակը հեռանում է: Աղջիկը գոտու տակից հանում է փոքրիկ դանակը, մազի մի փունջ է կտրում, դնում զոհասեղանին: Ծնկի է գալիս):

ԱՐՓԱԿՆ

Գիշերն էլ անցավ,
Այգն արծաթաթել
Լույսով քշում է դևին խավարի,
Պայծառադեմդ՝ հրաչվի արեգ,
Սնուցող երկրի:
Երկնի տիրուհի,
Ահա դու բազմած քառաձի կառքում,
Օրապտույտդ կսկսես կրկին՝
Մեծահոգաբար լույս շռայլելով
Ալիքվող ջրին,
Հասակին սոսյաց,
Ժայռին,
Քարերին,
Մթին անտառի
Խորքերում ապրող գազանիկներին:
Եվ կմաքառես հանուն ճշմարտի,
Անչար կմնաս դու չարի հանդեպ,

Տես, ծնկի իջած մեհյանիդ առջև,
Թույլ տուր, որ քեզ հետ ազատաբանեմ:

(Բակ է մտնում սպիտակամորուս մի մարդ՝ լայնաթև քղամիդով: Արևի տաճարի մեհենապետն է՝ Տարբանը: Նա համբաքայլ մոտենում, կանգնում է աղջկա թիկունքում: Արփակնը շարունակում է):

Մի՞ մեղքիս համար պարգևեցիր ինձ
Այսչափ սիրելու,
Սիրով տրվելու իրավունքը սուրբ,
Որ համտես չանեմ ճակատագրով
Ինձ բաժին ընկած
Մինչ շուրթն առլեցուն կարասի գինուց:
Եվ ինչ անենք, որ ազատ[3] եմ ծնվել,
Իսկ Առնակի էլ երակի միջով
Հոսում է իբրև արյունն ընդոծնու[4].
Հոռի խաբկանքն այս ո՞վ է ստեղծել,
Մի՞վ է սերմանել
Զանազանումն այս՝ անհեթեթ ու թյուր,
Վերջապես, ո՞վ է նախասահմանել
Մարդկային հոգու հանդեպ այսքան կույր
Տարբերակումը,
Երբ կա ընդոծին՝ բյուր ազատ արժե:



(Ծերունու ծնոտը սկսում է դողալ):

Կենարարդ արդար,
Անսա տիրապաշտ իմ սրտի ձայնին,
Եվ քո երկնային
Լուսասփյուռ գահից բարեմիտ նայիր,
Առաքիր լույսդ
Խավարում սուզված էությանս մեջ,
Ուր հողմն հրակեզ
Լափում է հոգիս...

(Մեհենապետի անկանոն շնչառությունից աղջիկը սթափվում է ու հապշտապ հեռանում):

ՏԱՐԲԱՆ

(Դիտելով ձեռքում պահած մազափունջը):

Արև՛ երկնաբնակ,
Որ լույսդ հանապազ սրտեր է խուժում՝
Մարմնավորվում այնտեղ.
Վիթին այս աչագեղ,
Պահպանի՛ր,
Զատի՛ր մտքից ախտաժետ...

(Բակ են մտնում մեհյանում ծառայող երեք այր):

ՏԱՐԲԱՆ

Պահն է արդեն,
Արփին դեմքի բոլորակը
Կիսով չափ, ահա, դարձրեց տեսանելի,
Մեհյանում բարեհաճ բորբոքեք կրակը...



(Լսվում է եղջերափողի ձայն: Ցալիս է ծիրանի հագած Հայկ Նահապետն իր ընտանիքով ու զորականներով: Ծնծղաներ: Մրգերով սկուտեղներ, գինով ու գարեջրով լի տակառներ, գառնուկներ և ուլեր ուսած ժողովուրդ):

ՀԱՅԿ

(Հանդիսավոր դիրք ընդունելով)

Ազնակիցներ,[5]
Ուխտավորներ մերձաբնակ,
Հզորագույն արփու բագնին.
Մատուցում եմ
Յոթ արջառներ՝ խաժաչ ու գեր,
Ցուլեր նույնքան,
Նույնքան վիթեր,
Ու քարայծեր էլի նույնքան,
Ու վարազներ սրաժանիք,
Իսկ ոչխարներ՝ երեք այդքան:
Եվ քառասուն տարվա գինին
Ըմպեք սիրով,
Ու երգեցեք,
Ու վարգեցեք,
Ու հաղթեցեք մրցամարտում,
Եվ յոթ գիշեր
Ու յոթ ցերեկ
Պարը թնդա թող մեր Հարքում[6]:



(Ծնծղաներ: Աղջիկները ձեռքներին բարդու, սոսու և կաղնու տերևախիտ ճյուղեր, նետվում են առաջ: Ժողովուրդը բաց է թողնում աղավնիներ: Միաձայն երգում են երեք գուսան):

ԳՈՒՍԱՆՆԵՐ

Տե՛ս, տաճարի վրա է
Արևի տաք ժպիտը,
Մեզ թիկունք ու զրահ է,
Թող ապրի՛ մեր նահապետը:

ՁԱՅՆԵՐ

Ապրի՛,
Ապրի՛,
Ապրի՛...

ԳՈՒՍԱՆՆԵՐ

Այս շողակն առավոտին՝
Զոհ մատուցենք, գինին հետը,
Ցողն է կապել հողին գոտի,
Թող ժպտա՛ մեր նահապետը:



ՁԱՅՆԵՐ

Ժպտա՛,
Ժպտա՛,
Ժպտա՛...

ԳՈՒՍԱՆՆԵՐ

Խինդն է շրջում ամեն մի տուն,
Երբ կապարձում է մեր նետը,
Հայկի ցեղն է հար հաստատուն,
Թող ցնծա՛ մեր Նահապետը:

ՁԱՅՆԵՐ

Ցնծա՛,
Ցնծա՛,
Ցնծա՛..

(Փանդիռի հնչյունների տակ ժողովուրդը պարում է: Հրապարակ են մտնում չորս սուսերամերկ զորականներ: Սկսում են ցատկոտել թաթերի վրա, առաջ են գալիս ու զրնգոցով բախվում վահաններով, խաչում սրերը, ապա ետ մղվում:
Այդ պահին սրամերկ հրապարակ է մտնում մի զորական: Ընդհատվում է երաժշտությունը):

ԶՈՐԱԿԱՆ

Կարծրությունը իր սեփական սրի,
Ո՞վ կուզի փորձել իմ սրի սայրին:



(Լռություն է: Հայկը խոժոռում է դեմքը):

ՋՈՐԱԿԱՆ

Մնում է միայն
Աղոթել արփու զոհասեղանին:

Ա. ՇԻՆԱԿԱՆ

(Ցածրաձայն)

Մի տես, Է...
Ո՞վ է այս ջահելն արի:

Բ. ՇԻՆԱԿԱՆ

Անունն Առնակ է,
Հայրն էլ տիրասեր ընդոծին էր մի,
Որ վիհի եզրին,
Մեջքը ջախջախված դեռ մաքառում էր,
Ու ձեռք չէր քաշում արջից ամեհի:

Ա. ՇԻՆԱԿԱՆ

(Ցույց տալով չանգերը)

Ասում են՝ էսպես որսորդ Արբակը,
Կիպ շուլալվել էր
Ահեղ գազանի սև փորատակին:

Բ. ՇԻՆԱԿԱՆ

Վերջն իր հետ տարավ խորքը անդունդի:

Գ. ՇԻՆԱԿԱՆ

Եթե, իսկապես, զավակն է քաջի,
Սրամարտում սա չի էլ նահանջի:

(Սուրը ձեռքին հրապարակ է մտնում Մանավազը, հանում է քղամիդը: Աշխուժություն ժողովրդի մեջ):

ՄԱՆԱՎԱԶ

Իմ սրի սայրին
Փորձիր քո սրի զորությունն հիմա:

ԶՈՐԱԿԱՆ

Մանավա՛զ, քեզ հետ
Սրամարտել ես չէի ցանկանա:

ՄԱՆԱՎԱԶ

Կեցվա՛ծքդ պահիր,
Ինչպես վայել է քաջ զորականին:

(Սրերը խաչվում են: Մաքառման պահին զորականի սուրն իջնում է Մանավազի սրին: Վերջինիս սուրն ընկնում է ձեռքից: Զորականը մի ճարպիկ ոստյունով ոտքը դնում է Մանավազի սրի վրա):



ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Սոսիների պուրակ է: Արփակնի դայակը՝ դեմքը արևին, նստած է գետակի ափին: Նա սոսու ճյուղով խաղալով ջրի հետ, հանդարտ երգում է:

ԴԱՅԱԿ

Կգաս անուշ գլգլալով՝
Մեր ձյունների դողը վրադ,
Հանդ ու չոլում թավալ տալով՝
Բարձրիկ արփու շողը վրադ.
Իմ կապուտակ ջրիկ,
Իմ անուշակ ջրիկ:

Եվ զովություն կբերես մեր
Արտին, հնձվոր էրիկներին,
Ջորականին մեր սրամերկ
Ու մեր ծոցվոր հարսնուկներին.
Իմ կապուտակ ջրիկ,
Իմ անուշակ ջրիկ...

(Ընդհատում է երգը: Սոսու ճյուղը նետում է մի կողմ և անհանգստացած վեր է կենում):

Արփակն ուշացավ...
Գնամ մի տեսնեմ ինչ եղավ նրան:
Բայց չէ, մի քիչ էլ

Համբերություն տուր, արեգ աստված,
Որ կարողանամ
Սպասել այնտեղ, ուր պատվիրված է:

(Դադար: Արևից աչքերը կկոցելով)

Եղջերափողը վաղուց է լռել.
Ու մարդիկ այնտեղ հիմա գինովցած՝
Ջոփի են տալի,
Կաքավում ձիեր,
Խաչում են իրար սրեր մերկացած,
Այ երանություն...
Արփակն էլ հիմի՝
Աղջիկների հետ թև թևի տված,
Դարձպար է բռնել բակում տաճարի:

(Նայելով շուրջը)

Չէ, ինչ եմ ասում,
Թող մարի հոգիս,
Թող որ անճարիս լեզուն չորանա.
Ջուր մեղքը առա անմեղ գառնուկիս,
Այնպես, իր քեֆով նա չի ուշանա:
Հա, չի ուշանա, ես գիտեմ նրան՝
Թե առիթ չկա,
Չկա մի պատճառ...

(Երեր քայլերով գալիս է Արփակնը)

Ահա, գալիս է...
Բայց ինչու այդպես դանդաղ է քայլում:
Ահից քիչ մնաց խավարեր լույսս,



Իսկ իր համար՝ ինչ,
Ադամալույսի հոտն է վայելում:

(Դադար)

Ամա՛ն, երեսի գույնը թռել է.
Ու հերակալից
Դուրս են թափվել ծամերը ոսկի,

Շրջազգեստի փեշն էլ պատռել է...

(Գնում է ընդառաջ)

Արփա՛կն, աղջի՛կս, ինչ է պատահել.
Մացառո՛ւտն ընկար,
Ճամփին քեզ ինչ-որ մա՛րդ է հանդիպել,
Հելուզա՛կ վատթար...

(Գրկում է աղջկա ուսերը)

Հը՛, դե ասա, է՛...
Սիրտս ջո՛ւր դառավ:

ԱՐՓԱԿՆ

Շրջազգեստս այդ երբ պատռվեց,
Ես չեմ զգացել...
Ճամփին միգուցե...

(Դիմում է դայակին)

Միայնության մեջ խորհեցի՛ երկար,
Ելքը չգտա՛...
Մամի՛, մրսո՛ւմ եմ...



ԴԱՅԱԿ

(Գլխաշորը գցելով աղջկա ուսերին)

Բան չեմ հասկանում,
Էհ, միտքս է տկար,
Ի՞նչ ելք, աղջիկս, ինչեր ես ասում:

ԱՐՓԱԿՆ

(Մատները կոտրատելով)

Ինձ խորհրդակից արևին միայն
Ցանկացա դարձնել,
Զի բնությամբ իր խիստ կենարար է,
Գաղտնապահ նաև...

ԴԱՅԱԿ

Պարզ է, կապույտից պայծառ լուսատուն
Տեսնում է շատ բան,
Բայց բերանը՝ խուփ...

(Մատները սեղմում է իր շուրթերին: Այդ պահին նկատում է աղջկա կարճ կտրված վարսափունջը):

Վայ, չտեսնեի, եղուկ ինձ, եղուկ...



ԱՐՓԱԿՆ

Զոհասեղանին նվիրեցի այն,
Որ մեր կենսաբուխ արևը վերից
Ընդունի սիրով,
Սիրտը մեղմանա.
Ու մոր գթությամբ ականջ դնի ինձ:

ԴԱՅԱԿ

Հետո՞:

ԱՐՓԱԿՆ

Արևի բագնի հանդիման ծնկած
Աղոթում էի,
Թիկունքիս կողմից զգացի հանկարծ
Հևքոտ ու ծանր շնչառություն մի.
Թեքվեմ, ո՞ւմ տեսնեմ՝
Ծերուկ Տարբանն է՝ դեմքը այլայլվա՞ծ...

ԴԱՅԱԿ

Ես էլ կարծեցի բա՞ն է պատահել:
Բագնապետը մեր հելուզակ հո չի՞,
Կանգնի՞ թող,
Որքան իր սիրտը կուզի:



ԱՐՔԱԿՆ

Մամի՛, վկա ինձ աստվածները մեր,
Ու շողոտ պահն այս ադամալույսի,
Երբեք չի լռի ծերուկ Տարբանը՝
Իմ թաքուն սիրո աղոթքի մասին.
Սիրտս հուշում է անախորժ մի բան:

ԴԱՅԱԿ

(Բռնում է աղջկա ձեռքը)

Վա՜յ, դեղձանի՛կս,
Իմ ցո՛ղ վաղորդյան,
Ո՞ր երանելի կտրիճն հոգուդ մեջ
Էդ կրակն արեց,
Ու խորովում է սիրտդ կուսական:

ԱՐՔԱԿՆ

Մամի՛, իմ սիրո ավարտը բարի,
Գուցե սրտիս մեջ երազանք մնա:

ԴԱՅԱԿ

Չար բան մի՛ ասի,
Գա՛ռս, շուրթերդ բարի՛ բաց արա:

ԱՐՓԱԿՆ

Այն այրը, որին սիրտս տենչում է,
Կրտսեր որդին է որսորդ Արբակի:

ԴԱՅԱԿ

(Ձեռքը խփում է ծնկին):

Ասիր Արբակի՜ ... Անմեղ երեխա,
Այն որսորդի, որ վիհին կեր դառավ:
Վա՜յ, ճիշտ որ սիրո հուրը անխնա
Աչք չունի բնավ,
Ում էլ հանդիպի՝ մրրկում, էրում է...

(Դադար: Նայելով աղջկա աչքերին)

Գիտես, ընդոծնու որդու ես սիրում:

ԱՐՓԱԿՆ

Ազատների մեջ չես գտնի մեկին,
Որ կանգնի նրա կողքին հավասար.
Հաղթահասակ է.
Եվ հայացքը՝ սեգ,
Ծավի աչքերում՝ վսեմաշուք փայլ:
Ու վճիռներում անկոտրում է նա,
Նետն է անվրեպ
Եվ սուրը՝ հուժկու,

Կռվի մեջ հողմ է դառնում ահարկու,
Սիրտն էլ բարի է ինչպես երեխան:
Այսքան բանից ետ, դե՛, արի, մամի՛,
Համարենք, որ իմ սիրուն արժան չէ,
Ինչ է՝ ծագումով ընդոծի՛ն է մի ...

ԴԱՅԱԿ

Ուշ է, աղջի՛կս...
Գա՛ռս, դե՛, գնա՛նք, գնալու ժա՛մն է...

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Սյունազարդ դահլիճ: Սրահի խորքում՝ պատին կախված են նիզակ, դաշույն, սակր, աղեղ, կապարճ, վահան:

Բազմոցներին նստած են Հայկը, Համրամը, Արամանյակը, Խոռը և Մանավազը:

ՀԱՅԿ

(Հեգնելով)

Արփակն, ասում ես, սիրահարվա՛ծ է.
Ինչպիսի՛ հանցանք ...

ՀԱՄՐԱՄ

(Մտահոգ)

Արփակնի բախտը
Պետք է մեզ հուզի հավասարապես:



ՀԱՅԿ

Արևն էլ լույսն իր
Պարգևում է մեզ առանց խտրության,
Մտքերիդ թաքուն իմաստը մեկնիր:

ԱՐԱՄԱՆՅԱԿ

Հայր իմ, Արփակնի ընտրած փեսացուն
Սերված է չնչին ընդոծնու տոհմից:

ՀԱՅԿ

(Թիկնելով)

Ընդոծնու դուստր էր և ծնող մայրդ,
Մի վիթաճեմիկ անմեղ աղջնակ,
Ու մաքրակենցաղ,
Ջրի պես վճիտ,
Երկինքը վկա, մի քայլող հմայք...
Եվ ինձ պարգևեց որդիներ կտրիճ:

(Դադար: Արամանյակին)

Իսկ ո՞վ է տղան:

ԱՐԱՄԱՆՅԱԿ

Զորականը այն,
Առնակ է կարծեմ անունը նրա,
Որ սրամարտեց Մանավազի հետ:



ԽՈՌ

Հայր, ասեմ նաև՝
Կրտսեր որդին է որսորդ Արբակի,
Որ խորխորատում ավանդեց հոգին:

ՀԱՅԿ

Արբակի՞ ...
Որսում հմուտ այր էր մի,
Անկոտրում էր և խիստ հնարամիտ:

ԱՐԱՄԱՆՅԱԿ

(Ծոցից հանում է թավշյա մի փաթեթ):

Տարբանն ինձ ասաց,
Որ հավախոսին՝
Արփակն արևի
Զոհասեղանի առջև ծնրադիր,
Աղոթում էր իր ընդոծնու համար:

ՀԱՅԿ

(Դիտելով վարսափունջը)

Տեսարա՞ն անշուք,
Խոսքեր սնամեջ,
Որդի՞ս, եղբորդ պարտությունն անշուշտ
Փոթորկվում է քո երակների մեջ:



(Նայելով Արամանյակին)

Աղոթքը քիչ է նման խիզախի
Սիրո համար մեծ
Ու հաջողության,
Պետք է որ լինես բազկակից նրան,
Քանզի հզորը քեզ չի խարդավի:
Իսկ թե կտրիճին
Չգնահատեմ կտրիճավայել
Եվ չհենակեմ կամքը սիրապաշտ
Հարազատ դստեր,
Օ, թող որ զրկվեմ լույսից արևի:

(Գալիս է Իսկանին: Նա ամբողջությամբ սպառազեն է):

ՀԱՅԿ

Ի՞նչ լուր, Իսկանի՛,
Անպատեհ այցդ խորհուրդն ունի իր:

ԻՍԿԱՆԻ

Մարդիկ խժական
Ավարառության մոլուցքով բռնկված
Հարձակվել էին վեհագույն արփու
Բագինի վրա:

(Իսկանին հանդարտ մոտենում է մի ազատ բազմոցի):



ՀԱՅԿ

Իսկանի՜, որքան արագաշարժ ես
Դու սրամարտում,
Կրկնակի անգամ ծույլ՝ խոսելու մեջ:

ԻՍԿԱՆԻ

Ստահակները դեռ նոր-նոր էին
Հասել բագինի պարիսպներին կուռ,
Մեր երեքթևյան նետերից հուժկու
Մի կերպ խույս տվին:

(Ներս է մտնում Առնակը՝ առաջ մղելով զինաթափ ու ձեռքերը կապկպած մի մարդու: Համրամը գնում է:)

ԱՌՆԱԿ

Սլուն[7] ցեղից է:
Իր խմբով վերին արոտատեղից
Ինչքը մեր կուզեր...
Սակայն նրանցից
Շատերին սիրով
Ճանապարհեցինք աշխարհը ալքի[8],
Իսկ մնացածն էլ եղան ցանուցիր:

ՀԱՅԿ

(Վեր է կենում նայելով անծանոթին)

Ձեռքերն արձակի՛ր:

(Առնակը վարանումով մոտենում է օտարականին):

ՀԱՅԿ

Փութաջա՛ն եղիր:

ԻՍԿԱՆԻ

(Քմծիծաղով)

Ի՞նչ վեհանձնություն,
Երբ արձակում են բիրտ հելուզակին...

(Օտարականը բերանքսիվայր փռվում է հատակին):

ՀԱՅԿ

Արարք կլինի անխոհեմ ու չար,
Որ ինքնագլուխ ազնակցի հանդեպ
Վարվեմ խժաբար...

(Օտարականին ոտքի կանգնելու նշան է անում):

Կյանքդ ի շնորհ,
Վերադարձնում եմ նաև զենքերդ,
Ջանա ետ կանգնել ճամփիցդ խոտոր,
Եվ գիտցի՛ր հստակ՝
Միայն ոչինչն է
Ավարառության հիմքը և վերջը:



ՕՏԱՐԱԿԱՆ

Ո՛վ աստվածազոր,
Կատարեցիր դու
Աշխարհիս համար չլսված մի բան.
Ես և եղբայրն իմ՝
Ցեղապետ Մանգուն,
Կհատուցենք քո հոգեմեծության
Հանդեպ արյամբ մեր:
(Օտարականը դուրս է գնում: Առնակը հետևում է նրան):

ՀԱՅԿ

Զորականդ քաջ, մի՛ աճապարիր:

ԱՌՆԱԿ

(Առաջանալով)

Պատրաստ եմ լսել
Մեծ Նահապետին:

ՀԱՅԿ

Սրտով հզոր ես,
Ու նույնքան անգամ
Բազուկդ արժան դրվատանքին իմ:
Այրդ թիկնավետ,
Դու զինակիրն իմ եղիր այսուհետ,
Նաև խոհակից՝ բազմահոգ պահիս:

ԱՌՆԱԿ

(Պատյանից հանում է սուրը և հպում ճակատին):

Պատրաստ եմ կյանքս
Դնել հայրենյաց սուրբ հողի համար:

ՀԱՅԿ

Առնա՛կ, հողը միշտ սուրբ էլ կմնա,
Թե տերը հողի տուրք չտա՛ դավին...

(Դադար)

Արդյոք սլունի կյանքն ապահո՞վ է՝
Մինչև հասնելը հայրենի հողն իր:

ԱՌՆԱԿ

Տե՛ր մեր ...
Նախօրոք զգուշացված էր՝
Դրսում սակրավոր
Երեք զորական պահակում էին.
Նրանք կուղեկցեն:

ՀԱՅԿ

(Վեր կենալով) -
Խաթթեի՞ց մինչև ծովը Վրկանա՞[10],
Փռված մի երկիր,



Որի լեռների
Զյուն կատարները ամպերի թեթև
Ոգուն են միայն հասանելի լոկ,
Ու անձավներում,
Որոնց խավարում
Դողը կպատի մարմինը ալքի,
Մարդիկ են կենում խեղճ ու տառապյալ,
Ցեղեր ազնակից,
Դեռ հնուց անտի...

ԻՍԿԱՆԻ

Այդ ինքնագլուխ հելուզակներին
Խելքի բերելը դյուրին չէ այնքան:

ՀԱՅԿ

Դյուրինը միայն
Խույս տալն է, Իսկա՛ն,
Դժվարին գործից.
Ապա մի փորձիր
Կացարանները մտնել գետնախորշ,
Ու քրեղանից՝ կոպիտ ու անթուրծ,
Ճաշակել նրանց շիլան հաճույքով:
Երբ մագլցում են որսի ետևից՝
Ժայռերը ի վեր քարայծի նման,
Աշխատիր ելնել միայն առջևից.



Վտանգի պահին չլքել նրանց,
Որ քեզ հավատան...

ԻՍԿԱՆԻ

Հավատան թեկուզ,
Էլի բնությամբ
Մնալու են բիրտ ու կրկին անսանձ:

ՀԱՅԿ

(Շեշտակի նայելով Իսկանիին)

Երբ ձին դաշտերով սուրում էր անսանձ,
Սահումով թեթև՝ նման երազի,
Ասա՛, բնությամբ այն հեշտասանձ էր:
Երազն էլ սանձվի՞ ...
Սակայն անկոտրում ձին այդ երազի
Ինձ ու քեզ համար
Ա՛րդ, նժույգ է մի:

ՄԱՆԱՎԱԶ

Հայր, մանր ու անհայտ
Ցեղեր էլ կան, որ
Հարկ չէ երևի նրանց ճանաչել:

ՀԱՅԿ

(Պատուհանից դուրս նայելով)

Ահա՛, դիմացի այս սարաբերդը,
Որի կատարին աստվածն է ամպի՝
Ցեղեր համարենք ամեն մի շերտը
Եվ սարը՝ մի ազգ,
Ե՛կ ու կործանիր ...

(Դադար: Դեպի նստածները)

Ուրեմն իմացե՛ք,
Որ մեր հարավում
Աքքադն [11] է հզոր,
Որ նմանակը չուներ դավերում.
Եվ ահյակ կողմում՝ Մուշկն[12] ու Խաթթերն են՝
Քոչվորաբնույթ ու ավարառու ...
Որի՞ն թվարկեմ.
Կորովացել է երկիր Փյունիկեն[13]:
Զորաշարժումով Ղպտին[14] եղկելի
Ծավալ է տալիս իշխանությանն իր,
Եվ պետք է սրանց դիմագրավե՛նք:
Սիրելի՛ք իմ,
Այլ կերպ չի՛ լինի.

Միայն ջերմությամբ պետք է նվաճենք
Հավատը պառակտ ազնակիցների,
Ինչպես ժեռ քարի սիրտը նվաճեց
Կրակը բոսոր,
Ու հոգուց քարի երկաթը շաչեց ...
Եվ հիմա ունենք խոփ, սակր ու սուր:

ԼՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մի ընդարձակ սրահ: Պատերը ծածկված են ռազմական տեսարաններով, մահապատժի ենթարկված գերիներ պատկերող բարձրաքանդակներով: Պատերի տակ աստվածների արձաններ:

Սրահի վերնամասում՝ սեղանը բոլորած արքունին գինովցած է:

Բելը մտահոգ ընկղմվել է գահույքի մեջ:

ԲԵԼ

Արդարև,
Թորշոմած ձեր երակներում
Աքքադական նռան գինին է եռում:

(Արքայական գավազանով ներկաներին հեռանալու նշան է անում: Բոլորը վեհերոտ հեռանում են: Թիկնապահները դեռ հապաղում են):

Եվ դուք,
Թիկնապահներ ...

(Թիկնապահները նույնպես հեռանում են)

Մնում է մեկուսի այսպես թիկնել
Ու խորհել շուրջն անելիքիս,
Ապա թե ոչ այս ծանրամիտները
Կխամրեցնեն ակնը խոհերիս:

(Աչքերը մի պահ սահեցնում է կուռքերի վրայով, ապա երկար կանգ առնում նրանց կենտրոնում գահանիստ իր ոսկեձույլ արձանին):

Բազմաքանդակ կուռքեր ...
Բաբելոնին[15] իշխող
Մեկ աստծու գոյը
Արդյոք հերիք չէ՞,
Եվ այն էլ ինձ նման հզորագույնը:

(Ձեռքը թափ է տալիս)

Սրանց հարցն այլ է,
Ու վեհանձնաբար
Դիրքն իրենց չեն զիջի կամովին,
Սակայն զորությամբ իմ,
Ինչպես շումերներին[16],
Երկիրն աշուրա[17],
Ըմբոշխնեցի որպես գավաթները իմ:
Եդոմն[18] էլ ինձ չանսաց՝
Դաշնակից համարեց Հուդային[19],
Բայց զատ-զատ գերեցի ես նրանց:
Խուրրիներն[20] անգամ ընդվզվել ջանացին՝



Ոտքս ընկան ծնկաչոք նրանք էլ.
Իմ կուռքին գահն իրենց զոհ բերին մովաբցիք[21],
Դարպասն իր բաց արեց Մենեֆիսն[22] իմ առջև:
Ամորի[23] ցեղի գոռ Ամոն ցեղապետի
Մարմինը կիզեցի
Իմ բագնի կրակով,
Հող-փոշի դարձրեցի երկիրն էլ էլամների[24]:
Բեթսան[25] էլ սուր ճոճեց,
Բայց վահանը նրա
Փափուկ էր սրիս դեմ կավն ինչպես,
Դագոնին քանանացոց[26]
Գահույքի հետ իրեն,
Ճզմեցի՛ ոտքիս տակ վերջապես:
Ա՛րդ, կողմում հյուսիսի,
Լեռներին սառնաշունչ
Իշխում է Հայկի ցեղը ինքնագլուխ:
... Եվ քաջ նետաձի՛գ է,
Ահեղ է,
Ռազմաշունչ ...
Եփրատի հոսքով վար
Նրա մոլած մարդիկ
Բաբելոն են գալիս կլոր նավակներով՝
Վաճառում ազնիվ գինի,
Բուրդ՝ վառվող կարմիր:



(Ներս է մտնում քրմապետ Բերոսոսը, գլխին՝ փաթթոց-խույր: Ձերմակ պարեգոտի վրա՝ թանկարժեք քարերով ու մարգարիտներով զարդարված թիկնոց, ոտքերին՝ սպիտակ մույկեր):

ԲԵԼ

Արբոն[27],
Արթնամիտ ու ամենատես
Հզոր Անուի[28] պատգամավորին:

ԲԵՐՈՍՈՍ

Գուցե տարաժամ է,
Սակայն աստվածային խորհուրդն ինձ մղեց ...

ԲԵԼ

Ի՞նչ խորհուրդ է, Բերոսոս:

ԲԵՐՈՍՈՍ

Սրտից Բաբելոնի բարձրյալիդ փառքը
Հասավ տիեզերաց անհունին աստեղնախիտ,
Հետայսու կքննես ոչ միայն բազմախիտ
Բարքը աքքադացոց, նաև լուսնի վարքը:

(Վեր կարկառած ձեռքերը իջեցնելով)

Մեկնեմ՝
Քավդեա[29] քրմերը մեր
Բարձր աշտարակից հզոր Անուի,
Զննեցին բազում տիվ ու գիշեր
Երկնքի անհունն աստղածիր,
Եվ քանի ժամում է լուսինը
Բոլորում պտույտի շրջանն իր:

ԲԵԼ

Խորամիտ Բերոսոս,
Հյուսիսում մեկը դեռ
Չի ծռում իմ դեմ հպարտ գլուխն իր,
Նրան պիտի խոնարհեմ կուռքիս դեմ ...

(Խուզարկու նայելով)

Հայկին դու գիտես.
Գոռոզ մի լեռնական,
Որի մարդիկ հաճախ Բաբելոն են գալիս՝
Վաճառում ազնիվ գինի և կարմիր որդան:

ԲԵՐՈՍՈՍ

Խորհուրդին հասու եմ,
Սակայն դժվար է տիրելը կռվով ...
Փոքրիկ ցեղ է թեպետ,



Բայց կարծր սրով
Հատում է նույնիսկ բրոնզեղեն աշտեն,
Ամենահաս նետով սփռում է զարհուր:
Իսկ պայտերը նրա մրրիկ ձիերի՝
Ինչպես կայծքարեր, արձակում են հուր:
Այլ է, եթե Հայկը
Անսա գերաշնորհ
Խոսքդ, և հյուսիսը թողնի սառցապատ,
Մեղմի նաև ըմբոստ բնույթն իր չարախոհ
Եվ խոնարհվի անձիդ:
Այնժամ որտեղ ցանկա,
Թող բնակվի ցեղով
Կամի՝
Թեկուզ հենց սրտում Բաբելոնի,
Զի գետերը մանրիկ որքան հոսեն հունով
Զուլվեն պիտի ծովի հզոր ալիքներին:

ԲԵԼ

(Ուղղվում է տեղում)

Իսկ ինչ է հուշում բոլորակը լուսնի:

ԲԵՐՈՍՈՍ

Նրա վրա կարմիր բծեր երևացին.
Դա իսկ հաղթություն է



Հավատի և մտքի,
Ձեռնարկումներ նաև,
Ի կատարումն հույսի ...

ԲԵԼ

(Ինքն իրեն)

Անքանակ զոհեր կմատուցեմ ես
Անուի բագնին,
Ու լուսնի պատվին՝ հատուցում որպես,
Կկերտեմ սյուներ սև քար Քաաբից[30] ...

(Բռունցքները սեղմում է ճակատին)

Մինչ շառագունի արշալույսը պերճ,
Թող Բաբելոնից դուրս գան Մոնթանուն
Եվ կրտսեր որդիս՝
Ուշիմ Պայասպին,
Ու մեկեն Հյուսիս՝
Երկիրն, ուր ապրում է Հայկն աղեղնավոր:



ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Առավոտ է: Սյունազարդ շենքի հարթ տանիքին կանգնած են Առնակն ու Արփակնը՝ նորապսակի հագուստով: Նրանց ետևում Համրամն է՝ ձեռքերը նորապսակների գլխին դրած: Իսկ առջևում Տարբանը, դեպի արևը մեկնած կրակի նշանը, երգեցիկ աղոթում է: Ներքևում շքեղ հանդերձով կանգնած է Հայկը, զորականներ ու ժողովուրդ:

ՏԱՐԲԱՆ

«Այգ բարև, այ այգ, բարև,
Այգն արևուն տանք բարև,
Տա թագվորին շատ բարև»:

ԺՈՂՈՎՈՒՐԴ

«Վահե՜,
Վահե՜»:

ՏԱՐԲԱՆ

«Այգ բարև, այ այգ, բարև,
Այգն արևուն տանք բարև,
Տա թագուհուն շատ բարև»:

ԺՈՂՈՎՈՒՐԴ

«Վահե՜,
Վահե՜»:

(Տարբանը հանդիսաքայլ իջնում է աստիճաններով: Նրան հետևում են նորապսակներն ու Համրամը: Նրանց առջև կանգնում են երեք փանդռահար գուսան):

Ա. ԳՈՒՍԱՆ

Բյուրեղից է Արփակնի թագը,
Նման մեր ձյուներին սարերի,
Արևի պես՝ դեմքը բոլորակ,
Հասակն է սլացիկ չինարի:

Բ. ԳՈՒՍԱՆ

Արփակնի վարսերը շողերն են
Տիեզերաց շողացիր ակնի,
Աչունքը Արփակնի ծովեր են,
Եվ փայլը Առնակի սակրի:

Գ. ԳՈՒՍԱՆ

Արևն է ուղարկում համբույրներ
Ու ժպտում երկնքից շափյուղա,
Եվ երկրին սիրավոր զույգը մեր
Պարգևի թող յոթը քաջ տղա:

(Աղջիկները սոսու ճյուղերից գործած պսակներ են գցում նորապսակների պարանոցին: Ծնծղաների ու փանդիռների հնչյունների տակ պարում է ժողովուրդը: Բակ է մտնում մի զորական):



ԶՈՐԱԿԱՆ

Բանագնացներ են
Բաբելոնից եկել
Թիկնապահներով իրենց՝ փոքրաքանակ:

(Լռում է երաժշտությունը: Զորականները մերկացնում են սրերը: Ժողովուրդը տագնապի մեջ է):

ՀԱՅԿ

Իսկ ո՞ւր են նրանք:

ԶՈՐԱԿԱՆ

Դարպասի առջև:

ՀԱՅԿ

Թող ներս բարեհաճեն:

(Թիկնապահների ուղեկցությամբ բակ են մտնում երկու դեսպան: Ավագ դեսպանը բարձրացնում է եռաժանի մականի ոսկեզօծ ծայրը):

ԱՎԱԳ ԴԵՍՊԱՆ

Ողջո՛ւյն ամենազոր Բելից տիեզերափայլ,
Որ միահեծ տերն է շքեղ Բաբելոնի,
Ինչպես և Աշուրի:

ՀԱՅԿ

Հյուրը պատկանում է հզոր աստվածներին,
Թե բարի է մտոք՝
Կանսամ խոհեմաբար,
Եվ կգոհացնեմ հյուրամեծարությամբ:

ԱՎԱԳ ԴԵՍՊԱՆ

Աստվածայինի կամոք՝
Մենք հյուսիս ենք եկել մի հույժ կարևոր
Պատգամով երկնահաճ:
(Թիկնապահներից մեկը թավշյա փաթթոցից հանում է կավե երկու պնակիտ[31] ու մեկնում ավագ դեսպանին: Վերջինս հանդիսավոր ու երգեցիկ կարդում է):

Եվ դիմում է քեզ աստվածն հզորագույն,
Ինքնակա՛լը միակ,
Տերը միահեծան.
Գիտցի՛ր,
Որ Բելից երկինքն էլ է սոսկում...
Գիտեմ, կամքդ է
Կյանքդ մշտնջենի
Մաշել լեռների ծերպերում սառնասառույց,
Սակայն տաքացրու քո հպարտ բնույթի
Սառնամանիքը ցուրտ,

Եկ,
Հնազանդվիր գահիս:
Հետո տիրույթում իմ,
Ինքդ ուր կհաճես,
Թե ցանկաս,
Թեկուզ սրտում Բաբելոնի,
Ցեղով քո,
Ինչքով բնակվիր տիրապես:
Իսկ եթե ոչ ...

ՀԱՅԿ

Պարզ է միտումը ողջ:

**(Հայկը տեղում ետ ու առաջ է անում:
Լարված վիճակ է):**

ՀԱՄՐԱՄ

Մեր ուրախ գինին,
Արդար հացը մեր,
Թունավորեցին ... Օ, փրկիր, արեգ:



ԱՎԱԳ ԴԵՍՊԱՆ

Բայց, Հայկ աղեղնավոր,
Շարունակելի՞ է,
Խոսքի վերջաբանին չեմ հասել ես դեռ:

ՀԱՅԿ

Համն զգո՞ւմ եմ դժխեմ վերջաբանի ձեր ...
(ժողովուրդն ալիքվում է: Հայկը վճռական դիմում է բաբելական դեսպանությանը):

Ասացեք, Աշուրի,
Եվ ձեր Բաբելոնի անկուշտ տիրակալին,
Ազատասեր Հայկն իր ձյունոտ լեռների
Հար հավատարիմ որդին կմնա,
Անդա՛վ կմնա նաև իր ցեղին:
Ապա ասեք նաև ձեր Բել արքային,
Իր մոլի ձգտմանն ու մղումին փառատենչ,
Անշո՛ւշտ, կհետևի սպա՛նդ մի սաստկալի:

ԿՐՏՍԵՐ ԴԵՍՊԱՆ

Որպես կրտսեր որդին հզոր տիրակալի,
Հայտնի է ինձ նրա բնույթն աստվածակերպ,
Խոհեմներին բոլոր լինում է հովանի,
Դառնում է անողոք ըմբոստների հանդեպ:



ՀԱՅԿ

Ուշիմ ես, պատանյակ,
Սակայն փոքր ես դու շատ,
Քեզնից խելոքներին խորհուրդ տալու համար:
(Դադար)
Ո՛վ էլ լինի թեկուզ,
Երբ ավազի վրա
Կուրորեն հիմնում է իշխանությունը իր,
Մի հզոր հողմից փոշի կդառնա:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Բարձրադիր բազմոցին մտախոհ նստել է Հայկը: Մյուս բազմոցներին տեղավորված են Արամանյակը, Մանավազը և Իսկանին: Գալիս է Տարբանը:

ՏԱՐԲԱՆ

Վկա հրաչվի արփին երկնաձեմ,
Այսօր անտառում անձամբ ականջեցի՝
Սոսյաց գրույցն էր դարձել սրտաճմլիկ.
Նշան չէ՞ բարի:



ԻՍԿԱՆԻ

Նահապետ, հուսանք գուշակ Տարբանը
Սոսյաց երգեցիկ սվսվոցներով
Կփակի ահեղ թշնամու ճամփան:

(Փոքր աշխուժություն է տիրում: Հայկը սաստում է):

ՀԱՅԿ

Հարգ է, Իսկանի՛,
Պետք է ակնածել
Արփու տաճարի սպասավորից:

ՏԱՐԲԱՆ

Նահապե՛տ,
Թող որ պաշտպան լինի քեզ
Բարձրյալին հզոր՝ շողավարս արփին:

ՀԱՅԿ

(Տարբանին առաջարկում է մի ազատ բազմոց):

Մեհենապե՛տ,
Առանց սոսյաց զրույցի էլ
Բարի չի՛ սպասվում՝
Գնալու ենք ի՛ զեն ...
Զի Բելն անձնահաճ է,



Եվ չի հանդուրժի:
Կշարժի խուռնընթաց զորքն իր զրահեղեղ,
Պետք է պատրաստ պահենք ասպար և աղեղ:

ՄԱՆԱՎԱԶ

Հայր, եթե քեզնից չերկնչեի,
Այդ կարճառտի լեզուն զազրապտույտ,
Սրիս սայրին հարմար հեսան կդարձնեի:

ՀԱՅԿ

Բանագնացը, օրենք է աներկբա,
Թե մական է կրում դեսպանական.
Անձն ապահով է՝
Ուր էլ գնա,
Թեկուզ լինի հողում թշնամական:

ԱՐԱՄԱՆՅԱԿ

Մնում է միայն գնալ ի զե՛ն:

ՏԱՐԲԱՆ

(Ձեռքերը երկինք կարկառելով)

Թող ո՛չ արասցե ...
Ինչո՞ւ ես լռում, ակն տիեզերաց:



ԻՍԿԱՆԻ

(Արամանյակին)

Վճիռներում հույժ աճապարելը
Ողջախոհության սոսկ թշնամին է,
Հուսադրողը մեր փոքրաքանակ
Զորական գունդն է:
Եվ ինչո՞ւ իզուր գնալ ոտատակ:

ԱՐԱՄԱՆՅԱԿ

Խորհուրդն անմոլար
Այս պահին, իրա՛վ, բաղձալի է շատ:

ԻՍԿԱՆԻ

Պնակիտներին դաջված էր կարծեմ
Եվ հաստատված իսկ կնիքով Բելի.
«Ինքդ ուր կհաճես,
Թե ցանկաս՝
Թեկուզ սրտում Բաբելոնի,
Ցեղո՛վ քո,
Ինչքո՛վ ...»

ՀԱՅԿ

Հիշեցնեմ նաև խոսքն այս, Իսկանի՛.
«Սակայն տաքացրու՝ քո հպարտ բնույթի

Սառնամանիքը ցուրտ
Եկ,
Հնազանդվիր գահիս ...»
(Վեր կենալով)
Անցյալում էլ անշուշտ՝
Գծծի էիր դու,
Ձեռք մեկնեցի, դե՛, մի պատանյակ էիր,
Այրացա՛ր,
Դարձար հմուտ նիզակակիր՝
Մնացիր աներկբա մորթապաշտը նույն.
(Հայացքը շեշտակի մեխելով Իսկանիի աչքերի մեջ)
Սին անարգելիդ,
Քո անձնապանծ մարմնի
Մորթն ես ջանում փրկել
Թեկուզ բնությքիս կործանման գնով:
Եվ արքունական գինարբուքներում՝
Տակառ որկորիդ հագուրդ տալու պատվին՝
Ժայռասվոր,
Ապա բազմաջան մի ցեղ,
Կամենում ես հանձնել շվայտ Բաբելոնի
Արնոտ երախին...
Անցյալի համար ափսոսում եմ, սակայն,
Որի հիմքում էր ծանրածանր նստած
Աստվածությունն իմ կույր բարեմտության:
Սխալմունքս շտկելն

Ուշ չէ անկասկած...

(Դադար)

Արյունը քո պիղծ չի աղտոտել քանի
Զորականներիցս որևէ մեկի
Սակրի շեղբը սուր,
Ուրեմն ի դ՛ուրս...
Եվ կեցությունդ կապահովես անշուշտ,
Այնտե՛ ուր չի հասնի ոտքը իմ ցեղի:



ԱՐԱՐ ԵՐՈՍՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Բելի պալատը: Բարձրադիր հարթակի վրա փղոսկրյա գահն է: Գահավորակներին ընկողմանել են արքունապետ Բաբապը, Արուալը և Դայասպին: Մոնթանուն աղյուսե պնակիտները ձեռքին սպասողական կանգնել է գահույքից քիչ հեռու: Բելը ջղագրգիռ վիճակում է:

ԲԵԼ

Եվ դո՛ւ, այպանելի՛,
Միայն մերժո՛ւմ բերիր:

(Մոտենում է Մոնթանուին և պնակիտները վերցնում ու զարկում է հատակին: Ներս է մտնում Բերոսոսը: Բելը մատնացույց անելով կտորտանքը, դիմում է Բերոսոսին):

Մ՛յս էր արդյունքը քո նենգ խորհրդի:

ԲԵՐՈՍՈՍ

(Ձեռքերը վեր բարձրացնելով)

Վկա մեծանո՛ւն և ամենազո՛ր...

ԲԵԼ

Ա՛րդ, չքվի՛ր խուցը քո,
Քանի դեռ ողջակեզ չե՛ս եղել բագնին իմ:

(Ներկաները զգաստանում են: Բերոսոսը դանդաղաքայլ դուրս է գնում: Բելը դիմում է արքունապետին):

Բաբա՛պ արքունապետ, բնույթը քո գծծի՝
Թոթափիր հոգուցդ օձաշապիկ որպես,
Գիտցի՛ր, չխնայե՛ս
Իմ ճոխ գանձարանի
Նույնիսկ վերջի՛ն ոսկին:
Իսկ դո՛ւ, Աբուալ,
Հորդ թագի՛ պատվին,
Փողեր հնչեցրու հանուն գալիք գահիդ,
Սահմանները իմ ողջ սուրհանդակներ ճամփիր,
Պե՛տք է աստվածն իշխի սեմիթական ցեղի:
Եվ իմ զինարանի դռները լա՛յն բացիր,
Ո՛չ մի նորամարտիկ անզեն չմնա թող:
Ամեն նիզակակիր,
Ասպարակիր ամեն,
Ամեն սակրավոր
Իմանա՛ թող,
Որ իր թիկունքում երկսայրի

Սուր կա պահված,
Թե նա խնայի անձն իր:

(Ներս է մտնում ոսկեկար զգեստով սպիտակահեր Նին-Խուրսագը: Դայասպին ընդառաջ է գնում: Նին-Խուրսագը ձեռքի կտրուկ շարժումով վանում է նրան):

ՆԻՆ-ԽՈՒՐՍԱԳ

Ի՞նչ գույժ եմ լսում...
Ի սեր աստվածների,
Ցեղը սեմական կործանել ես ուզում:

(Բելը մշուշված նայում է մորը: Դայասպին Նին-Խուրսագին գրեթե գրկած նստեցնում է գահավորակներից մեկի վրա: Դրսում՝ աղաղակներ, շեփորահարություն: Ներս է մտնում զինվառ Իսինին: Նա հոգնատանջ տեսք ունի):

ԻՍԻՆԻ

Տիրակալի կամոք,
Փշրեցի քանանցոց ընդվզող հոգին,
Եվ ամբողջ գյուղեր ես փոշիացրի,
Դարձրի մոխրակույտ ամեն մի քաղաք,
Որպես ռազմատուգանք՝
Աքքադական գահին,
Բերել եմ ես հարյուր ուղտաբեռ սպասք,
Ոսկի ազնիվ,
Սարդիոն արյունատեսիլ,
Սրեր, ապա վահաններ դրվագագեղ,



Եվ բաբելական մեր երկնակամարում
Որքան հուրհրատ աստղեր կան անեղծ՝
Այնքան ատրուկ եմ բերել ջղուտ ու տոկուն:

ԲԵԼ

Հանուն սեմիթների աստծո հզորության՝
Զրահավառ զորքդ պիտի զորաշարժես,
Դեպի երկիրն Հյուսիս:

ԻՍԻՆԻ

(Հուզված)

Հոգնատանջ է զորքը,
Թույլ տուր, որ տրվի փոքր զորադադար:

ԲԵԼ

Սեմիթ ցեղի հզոր արարչապետի
Կամքն է անդրդվելի:

ՆԻՆ-ԽՈՒՐՍԱԳ

Զլատել է նրան պատերազմը, Բե՛լ,
Թույլ տուր քիչ շո՛ւնչ առնի:

ԲԵԼ

Տիրակալը ես եմ տերունական գործի:



ՆԻՆ-ԽՈՒՐՍԱԳ

Հայկի մերժումից
Խոցված ես, հարկավ,
Սակայն գիտցիր, որդիս,
Տիրազուրկ թե թողնես մղումներդ չար,
Անշուշտ երկրիդ մղձավանջ կբերես,
Նաև կործանում՝ անձիդ տիեզերական:

ԲԵԼ

Անձս անվախճան է, անխոցելի նաև:

ԻՍԻՆԻ

Գալարափողը երբ որոտաց խրոխտ,
Մարտիկները մեր՝
Սասանեցին զորքը երկրի ընդվզող,
Սակայն պարսպակուռ
Բերդաքաղաքների պաշարման պահին,
Կիսով կորուստ տվինք զորականների:

ԲԵԼ

Շարժվիր դեպի հյուսիս եղած զորականով,
Մինչ ես կաճապարեմ նոր զորակոչ զորքով:

ԻՍԻՆԻ

Չեմ պարսավի նրանց, եթե թերանան,
Զի չեն եղել երկչոտ,
Տիրադավ նաև:
Երբ օդը կիզող՝ հրամոխրի նման
Մաղվում էր անխնա, ընդդիմակայելն
Անհնարին դարձնում,
Նրանք խելահեղ մահին էին հանձնում
Անձն իրենց՝
Սրտաքեր աղաղակներով...

ԲԵԼ

(Բորբոքված)

Զորականի հանդեպ հոր խնամք կա քո մեջ,
Սակայն գիտցիր նաև
Բագնիս հրին անշեջ՝
Կնվիրաբերեմ զորապետին նույնիսկ:

ՆԻՆ-ԽՈՒՐՍԱԳ

(Գրեթե խելակորույս)

Իսինի,
Որդիս...

ԻՍԻՆԻ

(Առաջանալով դեպի մայրը)

Ամեն զորագլուխ, իրավ, պարտավոր է

Սրտանց մտահոգվել՝
Զորականների նույնիսկ հոդատապով:

ԲԵԼ

Անշո՛ւշտ, մի զորական,
Չնչի՛ն նիզակակիր,
Թա՛նկ է հզորագույն գահից տիրակալիդ:

ԻՍԻՆԻ

Գահը հզոր է զորականի՛ սրով:

ԲԵԼ

Կիզե՛լ բագնիս հրով...

(Մուտքի մոտ պահակող մի խումբ սակրավորներ առաջանում են դեպի Իսինին: Իսինին սրամերկ ընդառաջ է գնում: Վերջիններս ընկրկում են):

ԻՍԻՆԻ

(Թեք նայելով)

Բելը հայտնի՛ է
Վարքով քմայական.
Բարձակից կդարձնի ստորինի՛ն նույնիսկ,
Եվ հաջորդ պահին կգլխատի՛ նրան:

(Սուրը դնում է պատյանի մեջ և դուրս է գնում: Նրան հետևում են սակրավորները: Նին-Խուրսագն ուշաթափվում է):



ԱՐԱՐ ՉՈՐՈՒՄ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Զինագործի արհեստանոցը: Ձախ կողմում մի երիտասարդ փուքսով օդ է մղում կրակին: Կողքին զնդանն է: Պատերի տակ սեղաններ են, որոնց առջև աշխատում են մի քանի վարպետներ: Մրոտ պատերին կախված են զինագործական գործիքներ: Վարպետները կիսամերկ են՝ կաշվե սև գոգնոցներով: Սպիտակահեր զինագործը ունելիով կրակի միջից դուրս է քաշում ջիկացած երկաթը, դնում զնդանին: Երկու երիտասարդ մուրճերով համաչափ հարվածներ են տեղում:

Ներս են մտնում Հայկը, Արամանյակը և Առնակը: Ավագ զինավարպետը ջփոթված՝ երկաթի կտորը գցում է հատակին ու առաջ գալով երկրպագում: Երկրպագում են և մյուսները:

Հայկը տարեց վարպետի թևից բռնած ոտքի է կանգնեցնում:

ՀԱՅԿ

Հմուտ զինավարպետ, հարկ չէ երկրպագման,
Արդ, հարկավոր են մեզ սրեր երկաթակուռ,
Սակրեր սրաշեղբ,
Նիզակներ ու վահան:



ԱՎԱԳ ԶԻՆԱՎԱՐՊԵՏ

Զենքերն ամեն պատրաստ են արդեն,
Պատրաստ են նաև պահպանակները,
Սաղավարտները,
Ասպարն ու աշտեն:

(Ցույց է տալիս աջ կողմի դուռը: Երեք երիտասարդի նշան է անում: Նրանք մտնում են զինատուն, իսկույն վերադառնում՝ հետները բերելով դրվագադեղ պատյանով մի հսկա սուր ու վահան՝ կենտրոնում երախաբաց առյուծ):

ԱՎԱԳ ԶԻՆԱՎԱՐՊԵՏ

Սա երկսայր սուրն է մեր Նահապետի,
Սա էլ ասպարը՝
Պահապան լինեն թող մշտնջենի:

(Հայկը ձախ ձեռքով վերցնում է ասպարը, աջով՝ սուրը և ծանր ու թեթև է անում):

ՀԱՅԿ

Ոսկի ձեռքեր ունես, հարկավ, զինավարպետ.
Սուրը քիչ թեթև է թվում ձեռքիս, սակայն
Վահանն այս կբաղձի ամեն մի զորապետ:

ԱՎԱԳ ԶԻՆԱՎԱՐՊԵՏ

Նահապետը մեր թող հզոր կենա,
Հանդուրժող, թե քիչ ազատաբանեմ,



Եղել եմ Ղպտում ու գնել հինա,
Աշուրը իմ հինգ մատի պես գիտեմ:
Վկա տարիքս, ինձ Բաբելոնն է
Զարմանք պատճառել իր շքեղությամբ,
Նաև ասում են՝ չի տեսել աչքս,
Նրա ամրակուռ գանձարաններում
Անթիվ ոսկի կա,
Սարդիոն ու հասպիս,
Էլ ինչ է կորցրել նա մեր սարերում:

ՀԱՅԿ

Փառապաշտությունն...
Նա տանել չի կարող,
Երբ մեկը ջանում է ապրել ինքնագլուխ:

ԱՎԱԳ ՋԻՆԱՎԱՐՊԵՏ

Վա՛յ ես... Նահապետ, ծերիս հանդուրժիր,
Դե՛, բնույթի խենթ երակ էր, անցա՛վ,
Կուռս դեռ պինդ է, հոգով էլ եմ ժիր...

ՀԱՅԿ

(Ուսերը թոթվելով նայում է Արամանյակին և Առնակին):

Ի՞նչ է, ցանկանում է կրել զենք ու ասպա՞ր,
Այն էլ այս տարիքո՞ւմ:



ԱՎԱԳ ԶԻՆԱՎԱՐՊԵՏ

Նահապետ հզոր,
Ախր սակավ ենք զորական թվով,
Բելն՝ հսկայազոր:

ՀԱՅԿ

Բայց նրա սրտում, գիտցի՛ր, նստած է
Փառքի անփառունակ վախճանն անկասկած:
(Ներս է ընկնում մի սուրհանդակ ու փռվում հատակին):

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Անմխիթար է թեպետ դերը գուժկանի,
Լռությունս էլ հիմա կործանող է, անշո՛ւշտ,
Թող հայտնի լինի մեծիդ դյուցազունների՝
Բելը գլուխն անցած զորքի հսկայակույտ,
Քաջերով ծանրազեն,
Աշտարակներով ու զարհուր բաբանյերով,
Ապա ծանրաշարժ ուղտերով ահեղատեսք,
Ողջը հրի տալով
Քեզ վրա՛ է գալիս ինչպես հեղեղահոսք:

ՀԱՅԿ

Իսկ Կադմո՞սը, գուժկա՛ն:



ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Մազապուրծ ճողոպրեց՝
Հողն ու ինչքը թողած՝
Գալիս է դյուցազուն որդիներով իր քաջ:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Կրկին այունազարդ դահլիճը: Հայկը ծանրախոհ նայում է պատուհանից դուրս: Արամանյակը, Խոռը, Մանավազը և Առնակը լարված վիճակում են: Բոլորն էլ զինավառ են

ՀԱՅԿ

Չենք գնում շքերթի ծիրանի զգեցած,
Կամ թե պատերազմը պարեգոտ չէ շքեղ,
Որ հագնենք հաճությամբ.
Կշահենք քաջությամբ,
Թե մարտում չտիրի՝ ջղերին ձեր լարված,
Մոլությունը ահեղ:

(Դրսում աղաղակ է: Ներս է ընկնում մի գուժկան՝ ձեռքերը խելակորույս թափահարելով):

ԳՈՒԺԿԱՆ

Գուլյժ,
Գուլյժ,
Գուլյժ,

Ու գույժը թող
Հայտնի լինի մեր հզոր Նահապետին.
Աղի ծով՝՝ հոսող ձկնառատ գետի[33]
Հեղեղատից անդին Բելն է բանակել,
Զորքով իր խուժդուժ,
Բազմում, ծանրազեն...

(Փռվում է հատակին: Ներս են մտնում երկու սպասավոր ու դուրս տանում նրան: Գալիս է Տարբանն ամբողջովին սևազգեստ):

ՏԱՐԲԱՆ

Արփին խռովել է...
Թուխպ է ցեղիս գլխին...

ՀԱՅԿ

Փոքր-ինչ հապաղելը
Արդեն անհեթեթ է:
Ու հենց վաղը ևեթ
Պատրաստ կենան մարտի՝ ազատ, թե ընդոծին.
Եվ Բելին պետք է, որ դիմագրավենք մենք
Աղի ծովից անդին:
Աջը՝
Արամանյակ, ապավինում եմ քեզ,
Նաև բազուկներին երկու եղբայրներիդ,
Որդոց հետ Կադմոսը ընթանա թող ձախից,



Քանզի սրամարտում հմուտ են հայտնապես,
Իսկ ես էլ առջևից.
Եվ գունդն ասպարազեն՝
Զորավիգ լինի մեզ:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Գետի հեղեղատի մոտ, կանաչախիտ հարթության վրա հայկյան զորքն է: Մեհենապետ Տարբանը աջ ձեռում՝ սուր, ձախում՝ ասպար, կանգնած է զորքի առջև: Նրա աջ կողմում ավագ զինագործն է: Դիմացը, քիչ հեռվում, Արամանյակն է, Մանավազը և Խոռը:

ՄԱՆԱՎԱԶ

(Նայելով հեռուն)

Որքա՛ն էլ հոծ են անիծվածները
Ու երփնահանդերձ:

ԽՈՌ

Բռնապետ Բելի իշխանության տակ
Որքան ազգեր կան՝ մեզ հյուր են եկել:

ՄԱՆԱՎԱԶ

Մեր հայրն իրավ է՝
Հենց տանդ շեմին,

Հյուրին միմիայն պետք է պատիվ տալ
Արժանագույնը:

ԱՐԱՄԱՆՅԱԿ

Այդպիսի հյուրի՞...

ՄԱՆԱՎԱԶ

Հո գիտես, ծովի փոթորիկների
Հետ ես շուրջպար եմ բռնել կյանքում ողջ,
Դեռ ափ չհասած՝ ձգտել եմ կրկին
Խրվել նրա խենթ ալիքների մեջ:

ԽՈՌ

Բայց նենգ է ծովը ու խռովահույզ:

ՄԱՆԱՎԱԶ

Նենգության ոգուն սարսուռ է պատում,
Երբ հանդիպում է հզորի սրին:

(Աշխուժություն զորքի մեջ: Գալիս է Հայկը: Նրան ուղեկցում է Առնակը հայկյան լայնալիճ աղեղն ուսած):

ՀԱՅԿ

Մեհենապետ Տարբա՞ն...
Զինագործ, դու է՞լ...

ՏԱՐԲԱՆ

Նահապետ հզոր,
Սուրն ու մեհյանն իրար
Համախոհ են դառնում պահին արհավիրքի:

ՀԱՅԿ

Զինավարպետ, ասա՛,
Տարիքն ու ասպարը համախո՞հ են իրար:

ԶԻՆԱԳՈՐԾ

Դեռ ես կարող եմ,
Մեր զորքին, տե՛ր իմ, գուցե օգո՞ւտ տամ:

ՁԱՅՆԵՐ

Հելուզակնե՛րը...
Թիկո՛ւնքը պահեք...

(Գալիս են երկու օտարական և խոնարհվում Հայկի առջև):

ԱՎԱԳ ՕՏԱՐԱԿԱՆ

Մանգուն եմ՝
Ցեղապետը սլունի ցեղի,
Սա էլ եղբայրս է՝ հմուտ նիզակակիր,



Որին աստվածաբար կյանք շնորհեցիր:
Այս վտանգի պահին՝
Հատուցում որպես, ինձ հետ բերել եմ
Երեք տասնյակ ընտիր սակրավորներ,
Նույնքան նիզակակիրներ՝ տոկուն ու արի,
Եվ պարսատիկավորներ՝ երեք տասնյակ,
Երեք տասնյակ ճապուկ նետաձիգներ,
Եվ երկու եղբայրներիս արյունը տաք:

ՀԱՅԿ

(Զգացված)

Թող որ արյունը ձեր չսառչի երբեք:

(Դեպի զորքը)

Զորականներս,
Խավարը զարհուրելի
Խրվել է մեր լեռների սիրտը՝
Գետից անդին,
Ու Բելին ինչ փույթ անմեղ զոհերն ամեն,
Կորուստն հոգիների,
Միայն կործանի մեր ըմբոստության ոգին:
Եվ դո՛ւք,
Որ ավերի ամպեր եք պահում սանձած՝
Հանուն գոյատևման հեռավոր ափերի,
Ուժերի անհավասար
Մարտում պետք է որ ամեն մեկդ դառնաք

Պատերազմի աստված:
Թե ոչ, կդառնաք դուք քմայական Բելի
Ստրուկներն հետին:
Սիրելիներդ իմ,
Իմ քաջ զորականներ,
Այս գոռ ալիքների խառնաշփոթի մեջ
Անշեջ պահեցեք ձեր ոգին ազատության՝
Բոսորափայլ, ինչպես արփու Բագնի առջև
Հուրը հավերժ վառման:
Օ՛ն, ուրեմն առաջ...

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Սյունազարդ մի պատշգամբ: Համրամը ճեմում է մտախոհ: Արփակնը հենվել է պատշգամբի բազրիքին ու թախծոտ նայում է հեռուն: Սպասուհիներ:

ԱՐՓԱԿՆ

(Մոտենալով մորը)

Արդեն ինձ համար անտանելի է:

ՀԱՄՐԱՄ

Էհ, բանբերները մեզ մոռացել են:



ԱՐՓԱԿՆ

Գուցե դժվարին կացության մեջ են:
(Նայելով մորը)
Չգիտեմ ինչու,
Մեր հաղթանակին ես չեմ կասկածում:
(Համրամը գրկում է աղջկա գլուխը):

ԱՐՓԱԿՆ

Մայր, կամենում եմ...

ՀԱՄՐԱՄ

Նվիրված է քեզ վերուստ վայելում:

ՍՊԱՍՈՒՀԻ

Տիրուհիս, դեպի մեզ է շտապում
Զինավառ մի այր:
(Իրարանցում: Բանբերը հևասպառ բարձրանում է քարե աստիճաններով):

ՀԱՄՐԱՄ

Ի՞նչ լուրեր մարտից...

ԲԱՆԲԵՐ

Դևը կործանվեց:



ՀԱՄՐԱՄ

Բանբեր, շուրթերդ թող ցողվեն շողով
Վառ արեգական:

ԲԱՆԲԵՐ

Տապից մեռնում եմ...

ՀԱՄՐԱՄ

Մառանի գինուց մատուցեք, շտապ:
(Բանբերին)
Ո՞վ արևորդի,
Խոսիր, որ գոնե հասկանանք մի բան:
(Սպասուհին բանբերին գինի է մատուցում):

ԱՐՓԱԿՆ

Մայր, սիրտս ասես տեղից թռչում է,
Ու ականջներիս խորքում մեր աղի
Ծովն է մռնչում:
Ա՜խ, ավետաբեր, թե ճշմարիտ է
Վախճանը դևի
Ու ստույգ նաև հաղթանակը մեր՝
Հյուսքերս ամեն
Կընծայեմ արփու զոհասեղանին:

ԲԱՆԲԵՐ

Վկա տիեզերաց բարձրիկ արփին մեր՝
Դևը տապալվեց:
Եվ ինչպիսի՞ դև,
Իսկը զինավառ ահագնությունն մի:

ԱՐՓԱԿՆ

(Աշխուժացած)

Ո՞ւմ սրով ընկավ,
Ասա՛, այդ ինչպե՞ս...

ԲԱՆԲԵՐ

Երբ մենք դուրս եկանք դժնաբարք Բելի
Զորքի դեմ զարհուր,
Ու սպառազեն,
Ասես շանթազեն ամպեր բախվեցին.
Շա՛տ քաջեր ընկան... Ո՞ր մեկին թվել.
Դրանց հետ սլուն արծվենի եղբայրք,
Այրաբար զոհվեց զինագործը ծեր,
Մեհենապետն էլ եղավ ոտատակ:

ՀԱՄՐԱՄ

Խե՞ղճ ծերունիներ...

ԲԱՆԲԵՐ

Խենթության պահ էր...
Սրով զարկված՝
Վիրավոր մարդկանց ճիչերն աղեկոծ,
Գութը կշարժեր երկնի ու լերանց:
Այդ դեռ սկիզբն էր,
Վերջն էլ... Ո՞վ գիտեր...
Ու մեկ էլ տեսնենք Նահապետը մեր՝
Գնդով իր հուժկու և ասպարազեն,
Խրվեց թշնամու խառնամբոխի մեջ...

(Դադար: Օձիքը կոճկելով)

Հա՛, երբ իր գնդով Նահապետը մեր
Խրվեց թշնամու խառնամբոխի մեջ,
Զորականներն էլ՝ ահյակ ու աջից
Որպես աքցանի հուժկու ատամներ՝
Սեղմեցին նրանց կողերը երկու,
Վիճակը փոխվեց...
Զորքը թշնամու,
Ինչպես մրրիկից հայելին ծովի՝
Հեղակարծ դարձավ հոծ ալիքների
Մի խառնաշփոթ:
Ապշելու բան էր...
Իրենց հետ բերած



Ուղտերը նույնիսկ՝ նոթոտ ու բարի,
Վայրենաբնույթ տեղից ծառս եղած՝
Ոտատակ էին տալիս տերերին:

ՀԱՄՐԱՄ

Անշուշտ կամոքն մեր անմեղության,
Եվ ընկածների բարեխոսությամբ:

ԲԱՆԲԵՐ

Երբ թշնամական զորքը խարխափեց
Տագնապի մեջ ու տարակուսանքի,
Բելը բռնվեց խոր զարհուրանքի
Զգացմամբ ներուժ,
Ապա խուժադուժ
Ու վայրաբարո ամբոխին թողած՝
Մի խումբ քաջերով ամուր շրջափակ,
Նահանջեց դեպի մոտիկ բլրակը:
Բայց չէր վրիպել մեր Նահապետի
Աչքից հայեցող:
Այդ պահ էր ցնցող...
Ինչպես շանթառաք աստված՝
Մեր հսկան
Առաջ մղվեց ու՝ լայնալիճով իր,
Կանգնեց բռնության առջև,



Խավարի՛,
Եվ ասես մահվան շոշափման նման՝
Պրկված մատները
Այնպե՛ս ձգեցին ջլապինդ լարը,
Ցավից տնքացին ջղերն աղեղի.
Եվ երեքթևյան սլաքը սուրա՛ց
Ու սեպվեց չարի լանջապանակին...
Որպես փրկության ահեղ հաճույք մի՝
Անցնելով նրա թիկունքի միջով,
Խրվե՛ց լեռան մեջ:

ԱՐՓԱԿՆ

Օ՜, ուրախությո՛ւն,
Չե՛ս տեղավորվում փոքրիկ սրտիս մեջ:
Իսկ ե՞րբ են գալու:

ԲԱՆԲԵՐ

Կամքով ողջամիտ մեր Նահապետի,
Եպ առաջ անցա մոտ կես հրասախ:

ԱՐՓԱԿՆ

Թե կես հրասախ առաջ ես անցել.
Եղբայրները իմ,
Առնակը նաև,

Պարզ է, շատ շուտով կլինեն այստեղ:
Այդպես չէ՞, բանբեր:

ՀԱՄՐԱՄ

Ինչ-՝որ բան մեզնից, բանբեր իմ բարի,
Ծածուկ ես պահում,
Գուցե թվում է...

ԲԱՆԲԵՐ

Տիրուհիս, իրավ, ուստերդ կտրիճ,
Եղբայրներն հզոր,
Ինչպես կռվեցին...
Պիտի ասեմ, որ...
Արամանյակն է թեթև վիրավոր:

ՀԱՄՐԱՄ

Արամանյակը... վիրավորվածՀ է:
Ասացիր՝ թեթև՞...
Հավատամ, բանբեր:

ԲԱՆԲԵՐ

Բանբերի գործած ամեն մի կեղծիք՝
Ավերմունքներ է ծնում ու չարիք:

ԱՐՓԱԿՆ

Առնակի մասին չասացիր ոչինչ:

(Բանբերը պատասխանն հապաղում է):

ՀԱՄՐԱՄ

Սիրտս է շուռ գալիս քո լռությունից,
Շիտակն ասա ինձ:

ԱՐՓԱԿՆ

Ախ, ասա՛, ասա՛, սիրելի՛ բանբեր,
Բա՛ն է պատահել:

ԲԱՆԲԵՐ

Անկասկա՛ծ, շահած մեր հաղթանակի
Կեսը պետք է որ պատկանի նրան,
Հզո՛ր էր, թեթև՝ նման մի հողմի,
Ա՛յ, Նահապետին թիկնապա՛հ արժան:

ՀԱՄՐԱՄ

Թեթև էր, հզո՛ր...
Իմա՛ստը մեկնիր ակնարկիդ դաժան,
Ո՞ղջ է նա, այո՞:

ԲԱՆԲԵՐ

Մինչ լայնալիճից
Մահը կմեխվեր կրծքի մեջ Բելի,
Զախ կողմից ներհակ՝
Ինչպես ճահիճից
Սաստկալի թափով դուրս պրծած մի օձ
Ֆշշաց, սրընթաց...
Առնակը եթե չասպարեր կրծքով,
Նետն այն, անկասկած՝
Կողը կխրվեր մեր Նահապետի.
Նետասլաքը թույնով էր օծված:

(Արփակնն ընկնում է մոր գիրկը: Նրանց շրջապատում են սպասուհիներն ու ներս տանում: Լսվում է հեռվից):

Ժամն է կոչելու հաղթանակը վեհ,
Մեկն հարյուրի դեմ,
Հազարը՝ մեկի,
Թող գոյատևի մեր ցեղը հավետ
Մեկն հազարի դեմ,
Ու բյուրը՝ մեկի:

Մեկը բյուրի դեմ,
Թող կենան կրկին
Լեռներն անառիկ

Ու երկինքը մեր,
Կուլ չգնացին ավազուտներին՝
Լեզուն մեր քաղցրիկ,
Ոգին անձնվեր:

Պայքարն է հիմքը հարատևման մեր,
Մեկը բյուրի դեմ,
Ու բյուրը՝ մեկի,
Եվ կթավալվեն դեռ անթիվ դարեր,
Սակայն հավերժ են սերունդներն Հայկի:

(Շեփորահարություն: Ծնծղաներ: Գալիս են Հայկը, Խոռը և Մանավազը: Հայկը մտահոգ է):

ԽՈՌ

Հայր, չէ՞ որ մենք ենք
Հաղթել այս ահեղ ճակատամարտում,
Հարկ չկա չնչին մտահոգության:

ՀԱՅԿ

Զոհողության գնով բերված հաղթանակն էլ
Իր մեջ անմեկնելի հուզում ունի պահած,
Մի տարբերությամբ՝
Պարտվողն աղերսում է,
Իսկ հաղթողը՝ ժպտում հանդգնությամբ ի բաց:

ՄԱՆԱՎԱԶ

Թշնամին, իրո՛ք,
Անգոսնելի էր, քան թե սոսկալի,
Եվ հատուցեցի՛նք նրան արժանին:

ՀԱՅԿ

Միայն արյան գնով ընկած զորականի:

(Պատշգամբում երևում են Համրամն ու Արփակնը՝ շրջապատված սպասուհի-ներով):

ՀԱՄՐԱՄ

Բանբերը ստեց...
Ա՛խ, անո՛ւշ որդիս...
Արամանյա՛կս...

(Խոռը և Մանավազը գնում են նրանց ընդառաջ):

ՀԱՄՐԱՄ

Հաղթանակի՛ լույս՝
Բերված իմ որդու հեղված արյունով:

ԽՈՌ

(Գրկելով մորը)

Հանգստացի՛ր, մա՛յր...
Նա սայլակում է,
Միայն ոտքից է թեթև վիրավոր:



ՀԱՄՐԱՄ

Հավատամ արդյոք:
Սայլը որտեղ է:

ԽՈՌ

Զորականների հետ է, հավատա՛:

(Մանավազը Արփակնին գրկած իջեցնում է աստիճաններով: Արփակնը ընկնում է Հայկի գիրկը):

ԱՐՓԱԿՆ

Առնակն ո՞ւր է, հա՛յր...

ՀԱՅԿ

(Շոյելով աղջկա վարսերը)

Դստրի՛կս...
Արփա՛կն...
Առնակն այսուհետ
Կապրի երկնքի կապույտում աստեղային.
Նա յուր անձը տվեց, որ մեր երանավետ
Երկիրը շե՛ն մնա,
Մնա արևայի՛ն:
Որպեսզի չպղծեն մեր հանդ ու հողերը,
Մեր խորունկ ձորերը,

Այրերը մեր մթին:
Որ մնան անաղարտ ծովերը մեր աղի,
Գետերը՝ նման մեր բնությթին փրփրաբաշ,
Մեր լերունք անառիկ,
Խրոխտ ու երկնահաս:

ՀԱՄՐԱՄ

(Մոտենալով աղջկան)

Արփակն,
Աղջիկս,
Գնանք նրանց մոտ:

(Համրամն ու Արփակնը դանդաղ հեռանում են: Սպասուհիները ուղեկցում են նրանց: Լռություն է):

ՀԱՅԿ

(Անշտապ նստելով քարե աստիճանին)

Զարհուր մարտից հետո
Հաղթանակի շունչն է, հարկա՛վ, ախորժելի...

(Դադար)

Ո՞ր մեղքի համար էր սպանդն այս եղկելի
Ընդդեմ ցեղիս նյութվել...

(Գալիս է բաբելական բարձրաստիճան մի զորական, ձեռքին մի դրոշ, վրան ցուլի պատկեր: Նրա հետ՝ մի քանի զորականներ: Նա դրոշն զգուշորեն դնում է Հայկի ոտքերի առջև ու խոնարհվում:

Խոնարհվում են նաև բաբելական մյուս զորականները):



ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԶՈՐԱԿԱՆ

Դրոշը շքեղաշուք Բաբելոնի,
Որի ուժի դեմ
Փլվել են դարեր,
Եվ թավալվել են բարձունքներն ամեն,
Դնում եմ ահա ոտքերիդ առջև
Ու երկրպագում հզորագույնիդ:

ՀԱՅԿ

Կարիք չկա, անշո՛ւշտ, նման երկրպագման.
Զանա խոսքերը քո
Ամփո՛փ արտահայտել:

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԶՈՐԱԿԱՆ

Արքային հանձնեցեք մեր Բաբելոնին:

ՀԱՅԿ

Էլ ի՞նչ պետք ունի ձեր Բաբելոնը հզոր,
Մեռած մի արքայի:

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԶՈՐԱԿԱՆ

Բայց նա անվախճա՛ն է...

ՀԱՅԿ

Վճռականությամբ լի
Մի ցեղ հոգեմեծար,
Որ վառ է պահում ըմբոստության ոգին
Եվ ճակատին ունի դաջվածքն հավերժացման.
Տիրակալը ձեր հզոր Բաբելոնի
Կուզեր հնազանդել,
Տանել երկրպագման
Իր կուռքին,
Այնուհետ նենգաբար ձուլել
Խառն ու բազմամբոխ աքքադացոց երթին,.
Արդեն մեռած է նա...

(Դադար)

Զորքը բաբելական թող որ ազատ կենա:
Եվ ովքեր անկամաբար,
Տիրակալի կամքով եկել են մեզ վրա,
Կընդունի նրանց իմ երկիրն հյուրամեծար:

(Դիմում է որդիներին)

Փառանշող կարգով
Սուրբ հողին հանձնել բոլոր ընկածներին,
Սակայն բաբելական կարծեցյալ աստծուն...
Գարշելի է անգամ թողնել արևի տակ,
Քանզի լեշը նրա կտարածի ժանտախտ:

(Դադար)

Դին եղկելի՝
Կզմռսեք, ապա
Կթաղեք Հարքի մի բարձրավանդակ տեղում
Կրծքում ապառաժի,
Ի տես մեր ազանց ու գալիք սերունդների՝
Ըմբոստության ոգին որ հար արթուն պահեն:
Ապա ի տես նրանց,
Ովքեր կհանդգնեն մեր կամքն ազատասեր
Շղթայել դժնաբարք՝
Բելի պես կընկնեն
Անփառունակ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 **Հրասախ** — Չափի միավոր· Մեկ հրասախը 5250 մ. է
2. **Բագին** — Հեթանոսական զոհարան, մեհյան
3 **Ազատ** —Հին ու միջնադարյան Հայաստանում արտոնյալ դասը
4. **Ընդոծին** — Տվյալ գերդաստանում ծնված ու մեծացած, բայց ոչ տանուտերի սերնդից (ստրուկի, աղախնի որդի):
5. **Ազն** — Ազգ, զարմ:
6 **Հարք** — Գտնվում է Հայաստանի Տուրուբերան նահանգում՝ Արածանի գետի վերին հոսանքում:
7. **Սլուն** — Այս ցեղից հետագայում առաջացել է Սլկունիների տոհմը:
8. **Ալք** — Առասպելական չար ոգի, որն ապրում է անդրշիրիմյան աշխարհում:
9. **Խաթթե** — Խաթթի, եկվոր ռազմաշունչ ցեղ Փոքր Ասիայում·
10 **Վրկանա ծով** — Կասպից ծովը·
11. **Աքքադ** — Սեմական ցեղ, հյուսիսային Միջագետքի հնագույն բնակիչներից:
12. **Մուշկ-մուշկեր** —Հայաստանի հարավարևմտյան մասում սահմանակից խաթթերի երկրին:
13. **Փյունիկե** — Հին աշխարհին հայտնի է Փյունիկիա անունով, բառացի նշանակում է «արմավենիների երկիր»· Գտնվում է Միջերկրական ծովի արևելյան ափին, Պաղեստինից հյուսիս, նշանավոր Տյուրոս և Սիդոն քաղաքներով:
14. **Ղպտի (Եղիպետ)** — Հին հայերը այսպես էին կոչում Եգիպտոսը.
15. **Բաբելոն (աքքադ)** — Հնագույն քաղաք Միջագետքում, Եփրատ գետի ափին
16 **Շումերներ** — Միջագետքի ամենահին բնակիչներից:
17 **Աշուբ** — Քաղաք-պետություն Ասորեստանում:
18. **Եդովմ** — Հին հրեական ցեղ.
19 **Հուդա** — Լեռնային երկիր, Երուսաղեմից հարավ:



20. **Խուրրիներ** — 3—2-րդ հազարամյակներում (մ թ ա) տարածված էին Միջերկրական ծովի արևելյան ափին գտնվող Ուգարիտից սկսած դեպի արևելք

21 **Մովաբցիք** (մովաբեցիներ) — Քանանի (Պաղեստին) հնագույն բնակիչներ

22. **Մենեֆիս** (Մեմֆիս) — Հին եգիպտական քաղաք, Կահիրեից ոչ հեռու: Մեմֆիս անունը հունական ձևն է եգիպտերեն «Մենեֆեր» անվանման, որը նշանակում է մենեֆերի բնակավայր.

23 **Ամորի** (ամորեներ) — Սեմական ցեղեր: Հիշատակվում են 3-րդ հազարամյակից (մ թ ա) Եղել են Մարիի պետության կազմի մեջ, Ուր և Խառան կենտրոններով:

24. **Էլամներ** (Շուշտան) — Հին ստրկատիրական պետություն Պարսից ծոցից հյուսիս Կերքա և Կարան գետերի ավազանում (այժմ Խուժստանի շրջան, Շող կենտրոնով). Հիշատակվում է 3-րդ հազարամյակից (մ թ. ա.):

25 **Բեթսա** — Եղել է Քանանի հնագույն քաղաքներից մեկը Հիշատակվում է 4—3-րդ հազարամյակներից (մ թ ա)

26. **Քանան** — Պաղեստին Գտնվում էր Հորդանան գետի և Միջերկրական ծովի միջև.

27. **Արբոն** (աբոն) — Ողջույն (աշուրա-բաբելերեն)·

28. **Անուի** — Բաբելոնի առաջին գերագույն աստվածը Օդի և երկնքի հովանավորը Համուրաբի թագավորի օրոք տեղը զիջեց Մարդուկին

29 **Քավդեա** — Աստղագուշակ, աստղահմա, գուշակող, կախարդ.

30. **Քաաբի սև քար** — Մեքքայում բազմաստվածության ժամանակաշրջանի հուշարձանն է: Քարերի պաշտամունք գոյություն ուներ նաև փյունիկեցիների և քանանցիների մոտ:

31. **Պնակիտ** — Գրատախտակ.

32. **Աղի ծով** — Վանա լիճն է, իր համբավավոր տառեխ ձկով Զրի աղիության պատճառով մեր նախնիները կոչել են Աղի ծով.

33. **Զկնառատ գետ** — Խուշաբ գետն է՝ Վան քաղաքից հարավ

ՄԻՍԱՔ ՄԿՐՏԻՉԻ ՀՈՎԵՆՑ
Հայկ Նահապետ
Դրամա
Դպրոցական բարձր տարիքի համար

МИСАК МКРТИЧОВИЧ ОВЕНЦ
Айк Наапет
Драма
(На армянском языке)
Издательство «Советакан грох», Ереван, 1985

Խմբագիր՝ Էգ. Ս. Ավագյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան
Տեխ խմբագիր՝ Ա. Վ. Հովհաննիսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Վ. Գ. Ազաայան

ИБ 6214

Հանձնված է շարվածքի 26. 07 84. Ստորագրված է տպագրության 5 12 84: Ֆորմատ 60×70¹/₁₆ Թուղթ՝ օֆսեթ· 4,62 պայմ. տպ. մամ, 12,32 պայմ. ներկ թերթ., 2,95 հրատ մամ Տպատեսակ՝ «Արարատ» ՎՖ 09493: Պատվեր՝ 3174 Տպաքանակ՝ 10,000 Գինը՝ 30 կոպ.

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9 Տերյան 91·
Издательство «Советакан грох», Ереван — 9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Երևանի գունավոր տպագրության տպարան, Երևան—82, Ադմիրալ Իսակովի պող 48

Типография цветной печати Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван — 82, пр. Адмирала Исакова. 48.